ՆԱԽԱԿՈՂՏՆՏՍԱՅԻՆ ԳՅՈՒՂԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ

Վ. Ն. ՂԱԶԱԽՅԱՆ

Դեռևս 20-ական թվականներին գյուղի աշխատանք կատարվեց նախակոլտնտեսային գյուղի սոցիալ-տնտեսական տեղաշարժերը ուսումնասիրելու, կոմունիստական կուսակցության գնահատականներն ու եզրակացություններ կոնկրետ նյութով ու վիճակագրական տվյալներով մեկնարանելու ուղղությամբ։ Այդ գործում մասնավորապես մեծ ավանդ ներդրեցին մարքսիստ ագրարագիտ-տնտեսագետները։ Պայքարելով բուրժուական և մանրբուրժուական գաղափարախոսությունների դեմ, սովետական մարքսիստ հետազոտողները ստեղծեցին մի շարք աշխատություններ և գյուղի սոցիալ-տնտեսական երևույթների ուսումնասիրության մարդում հաստատեցին մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիան։

Ագրարային-գյուղացիական հարցում բուրժուական և մանրբուրժուական հայացքներ էին պաշտպանում մի խումբ հին մասնագետներ, պրոֆեսորներ։ Բուրժուական գաղափարախոսության կողմնակիցներից էին Լիտոշենկոն, Կոնդրատևը և ուրիշներ։ Մանրբուրժուական-նեոնարոդնիկական ուղղություն պաշտպանում էին Չայանովը, Չելինցևը, Մակարովը և այլ հեղինակներ։

Ըստ բուրժուական ուղղության կողմնակիցների (Կոնդրատև և մյուսներ) գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացումը կարելի էր ապահովել միայն խոշոր (կապիտալիստական) տնտեսությամբ, գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման, գյուղի շերտավորման ուժեղացման ճանապարհով։ Չելինցևը (մանրբուրժուական ուղղություն), ընդհակառակը, նշում էր, թե «գյուղատնտեսության արտադրողականությունը» զարգացնելու շահերը պահանջում են կանխել գյուղացիության շերտավորման ընթացքը[1]*։ Վերջին տեսակետը բխում էր մանրգյուղացիական տնտեսության կայունության մասին «տեսությունից»։ Ամփոփելով գյուղի շերտավորման հարցի մասին արտահայտված կարծիքները մարքսիստ տնտեսագետ Ի. Վերմենիչևը նկատել է, «մի կողմից փաստ է պրոֆեսորների մի մասի անպայման որոշակի շրջադարձը գյուղացիության էվոլյուցիայի մասին նարոդնիկական գաղափարախոսությունից բուրժուական պատկերացումներին, նրանց անցումը ուճող գյուղական բուրժուազիայի, կուլակության պաշտպանության դիրքերը (ընդդեմ պրոլետարիատի դասակարգային քաղաքականության)»։ Պրոֆեսորների մյուս խումբը, շարունակում է Ի. Վերմենիչևը, «հիմնականում մնացել է իր նախկին, նեոնարոդնիկական դիրքերում (Չ.յանով և Չելինցև), իր նախ-*

[1] *Տե՛ս* И. Верменичев. Классовое расслоение крестьянства и классовые позиции буржуазных и мелкобуржуазных теоретиков. «На аграрном фронте», 1927. № 7, стр. 37—53.

կին սկզբունքների քայքայման բոլոր նշաններով»[2]։ Մարքսիստական-լենինյան գաղափարախոսության ազդեցության տակ նեոնարոդնիկության բայքայումն ավելի ուժեղացավ։ Նրա կողմնակիցների մի մասն անցավ դեպի բուրժուական գաղափարախոսությունը, իսկ մյուս մասն ընդունեց մարքսիզմը[3]։

Ի հակադրություն բուրժուական և մանրբուրժուական ուղղությունների, մարքս-լենինյան մեթոդոլոգիայի բնորոշ կողմը գյուղացիական տնտեսության հարցերը սոցիալ-տնտեսական կապակցության մեջ քննարկելն է՝ հաշվի առնելով գյուղացիական տնտեսության արտադրաձևերը, տնտեսության միևնույն ձևի սահմաններում տարբեր տնտեսական խմբերի տեղը և դերը։

Արտադրության հարցը պարզաբանելու կապակցությամբ Կ. Մարքսը նշել է, որ հետազոտության մեթոդոլոգիական ելակետը՝ «ուսումնասիրության առարկան, ամենից առաջ, նյութական արտադրությունն է։ Հասարակության մեջ արտադրող անհատները,— հետևապես անհատների հասարակայնորեն որոշ արտադրություն՝ բնականաբար՝ այս է ելակետը»[4]։

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ դասակարգերը մարդկանց այնպիսի խմբերն են, որոնք միմյանցից տարբերվում են հասարակական արտադրության սիստեմում իրենց գրաված տեղով, արտադրության միջոցների նկատմամբ իրենց վերաբերմունքով, աշխատանքի հասարակական կազմակերպման մեջ զբաղեցրած դերով և իրենց տրամադրության տակ գտնվող հասարակական հարստության բաժնի ստացման եղանակներով ու չափերով։ «Դասակարգերը,— նշել է Վ. Ի. Լենինը,— մարդկանց այնպիսի խմբերն են, որոնցից մեկը կարող է յուրացնել մյուսի աշխատանքը, հասարակական տնտեսության որոշ կացութաձևի մեջ նրանց տեղի տարբերության շնորհիվ»[5]։

Սովետական գյուղի ուսումնասիրման առիթով Վ. Ի. Լենինը բացահայտեց տնտեսության այն ձևերը, որոնք պահպանվում էին սովետական երկրում նեպին անցնելու շրջանում, և որոնցում կազմակերպվում էին գյուղացիության տարբեր խմբերի արտադրական հարաբերությունները և գյուղացիության տիպերը։ Պատմական տվյալ ժամանակաշրջանում սովետական երկրի տնտեսակարգի կառուցվածքի հիմնական տարրերը (կացութաձևեր) հանդիսանում էին գյուղական տնտեսության նահապետական, այսինքն՝ ամենահասարակ ձևը, մանր ապրանքային արտադրությունը (հացահատիկ վաճառող գյուղացիության մեծամասնությամբ), մասնավոր կապիտալիզմը, պետական կապիտալիզմը և սոցիալիզմը[6]։ Երկրի տնտեսական կառուցված-

---

2 Նույն տեղում, էջ 52—53։

3 «На аграрном фронте». 1929 № 8, стр. 105. Բուրժուական և մանրբուրժուական գաղափարախոսությունների քննադատության մասին տե՛ս նաև. М. Кубанин, Буржуазная программа в земельном вопросе (о профессорах Кондратьеве, Макарове и Хауке), там же, 1927, № 2, стр. 18—30. И. Верменичев, О разложении новонародничества (историческая справка об одном бывшем народнике). Там же, 1929, № 2, стр. 33—42. М. Сулковский, Кадетский аграрник в советской действительности (о проф. Лютошенко). Там же, 1929, № 3, стр. 62—73. М. Сулковский, Эволюция и распад неонародничества. Там же, 1929, № 11—12, стр. 76—96.

4 Կարլ Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Երևան, 1948, էջ 231։

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 515։

6 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 373—374, 421 և հ. 33, էջ 496—497։ Տե՛ս նաև «ՍՄԿՊ-ն բանաձևերում ու որոշումներում», II մաս, էջ 247 (Համկ(բ)Կ XIV համագումարի բանաձևը) և այլն։

բին համապատասխանող հասարակական հիմնական ուժերն էին մանր բուրժուազիան, առանձնապես գյուղացիությունը, բուրժուազիան և պրոլետարիատը»։

Ելնելով այդ սկզբունքներից Վ. Ի. Լենինը գյուղացիությանը բաժանում է երեք գլխավոր խմբի, այն է՝ «շավորներ կամ կիսապրոլետարներ, միջակ գյուղացիներ և գյուղական բուրժուազիա կամ կուլակներ»[8]։ Չքավորները նրանք են, նշում է Վ. Ի. Լենինը, ովքեր չեն շահագործում ուրիշի աշխատանքը, իրենք են ենթարկվում շահագործման և մշտապես գիմում են իրենց աշխատուժի թեկուզ մի մասի վաճառքին։ Միջակ գյուղացին չի շահագործում, բայց շահագործման չի ենթարկվում, ապրում է մանր տնտեսությամբ, իր աշխատանքով։ Կուլակը նա է ով շահագործում է, կողոպտում է ուրիշի աշխատանքը, ապրում է նրա աշխատանքով»[9]։

Լենինյան մեթոդոլոգիական սկզբունքները և գիտողությունները հիմք ծառայեցին սովետական գյուղի հետազոտման համար։

1925 թ. ապրիլի 18-ին ԽՍՀՄ Ժողկոմխորհը ընդունեց «Ժամանակավոր կանոններ գյուղացիական տնտեսություններում օժանդակ վարձու աշխատանք կիրառելու պայմանների մասին» որոշումը[10]։ «Ժամանակավոր կանոնների» գլխավոր իմաստը աշխատավորական տնտեսությունները արդյունաբերական տիպի տնտեսություններից սահմանազատելն էր և դրանց վարձու բանվորների շահերի պաշտպանության նկատմամբ կոնկրետ մոտեցում ցուցաբերելը։ Արդյունաբերական տիպի տնտեսություններում, ինչպես և սովխոզներում, վարձու բանվորների աշխատանքի պայմանները որոշվում և պաշտպանվում էին Աշխատանքային օրենսգրքով։ Իսկ «Ժամանակավոր կանոններ»-ը սահմանում էին աշխատավորական գյուղացիական տնտեսությունների վարձու բանվորների աշխատանքի պայմանները։

Աշխատավորական տնտեսության բնորոշ հատկանիշը ամենօրյա աշխատանքին տվյալ տնտեսության աշխատունակ անդամների պարտադիր մասնակցությունն էր, իսկ վարձու աշխատանքից օգտվող տնտեսություններում՝ նաև դրա (վարձու աշխատանքի) օժանդակ բնույթը[11]։

Ավելի դժվար էր աշխատավորական (տվյալ դեպքում միջակ) և արդյունաբերական (կուլակային) տնտեսությունների սահմանազատումը, վերջինների հատկանիշների որոշումը։ «Ժամանակավոր կանոններում» փոփոխություն կատարելու վերաբերյալ միութենական ժողկոմխորհի 1927 թ. հոկտեմբերի 10-ի որոշումով արդյունաբերական տնտեսության հատկանիշների սահմանումը վերապահվում էր միութենական հանրապետություններին, և տրվում էին այդ հատկանիշների հիմնական սկզբունքները (գյուղատնտեսական միասնական հարկի ենթակա եկամուտների դումարը, վարձու աշխատանքից օգտվելու չափը, արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների ծա-

---

7 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 117։

8 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 532։

9 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 605, հ. 29, էջ 18, 293, 317 և այլն։

10 Տե՛ս «ԽՍՀՄ բանվորա-գյուղացիական կառավարության օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1925, № 26, հոդված 183։

11 Նույն տեղում, 1926, № 66, հոդված 501 (միութենական կենտգործկոմի 1926 թ. սեպտեմբերի 28-ի հրահանգ սովխոզների ընտրության մասին)։

վայր և այլն)[12]։ Իր հերթին ԱՍՖԽՀ ԺողկոմխորհՀ Անդրկովկասի հանրապետություններին վերապահեց այն տնտեսությունների սահմանների որոշումը, որոնց վրա չէին տարածվում «ժամանակավոր կանոնները»[13]։ Այդ որոշումների հիման վրա 1928 թ. նոյեմբերի 16-ին ՀՍԽՀ ԺողկոմխորհՀ սահմանեց գյուղացիական այն տնտեսությունների առավելագույն չափը, որոնց վրա չէին տարածվում «ժամանակավոր կանոնները»[14]։ Ելնելով նրանից, որ այդ կանոնները չէին վերաբերում արդյունաբերական տիպի տնտեսություններին, որոշումը, համաձայն տեղական պայմանների, սահմանում էր տնտեսությունը արդյունաբերական տիպին վերագրելու հատկանիշները՝ ըստ որոնց արդյունաբերական կոչվող տնտեսություններ էին համարվում գյուղի շահագործող, մանրկապիտալիստական տնտեսությունները (կուլակներ)։ Մյուսը՝ շահագործող տնտեսության բնորոշ հատկանիշը վարձու աշխատանքի գործադրումն էր կամ հողի վարձակալումը և արտադրամիջոցների վարձով տալը՝ որոշ սահմաններում։ Այդ սահմանների ճիշտ որոշումը կարևոր նշանակություն ուներ՝ աշխատավորական և արդյունաբերական տնտեսությունները միմյանցից տարբերելու համար։

Կուսակցության 15-րդ համագումարի որոշումների համաձայն, երբ ուժեղացվեց պայքարը գյուղական շահագործողների դեմ, 1928 թ. էական փոփոխություն կատարվեց կուլակներին հարկադրելու քաղաքականության մեջ։ Այսուհետև նրանք հարկ էին վճարելու ոչ թե ընդհանուր հիմունքներով, այլ անհատական կարգով։ Այդ կապակցությամբ պահանջ առաջացավ ավելի ճշտել կուլակության բնորոշ հատկանիշները, ավելի ճիշտ տարբերակել կուլակային տնտեսությունները։ Միաժամանակ, սրված դասակարգային պայքարի պայմաններում, կուսակցությունը և կառավարությունը ավելի ուժեղացրին բատրակների շահերի պաշտպանությունը։

Ելնելով դրանից ԽՍՀՄ Կենտգործկոմը և ԺողկոմխորհՀ՝ «Աշխատանքային օրենսգիրքը կուլակային տնտեսություններում կիրառելու կարգի մասին» 1929 թ. փետրվարի 20-ի որոշումով կուլակային տնտեսությունների սահմանման իրավասությունը թողեցին միութենական հանրապետություններին, նշելով, որ անհրաժեշտ է կոնկրետ վճռել եկամտի չափը՝ որպես ձեռնարկատիրական (արդյունաբերական) տիպի տնտեսության հատկանիշ[15]։ Նույն թվականի մայիսի 21-ին ԽՍՀՄ ԺողկոմխորհՀ որոշում ընդունեց կուլակային տնտեսությունների բնորոշման հարցի վերաբերյալ, սահմանելով նրա ընդհանուր սկզբունքները[16]։

Միութենական կառավարությունը նոր պայմաններին համապատասխան որոշում ընդունեց նաև աշխատավորական տնտեսություններում վարձու աշխատանքի և բատրակների շահերի պաշտպանության մասին. ԽՍՀՄ ԺողկոմխորհՀ հաստատեց նոր՝ «Աշխատավորական գյուղացիական տնտեսություններում օժանդակ վարձու աշխատանք կիրառելու վերաբերյալ ժամանակավոր կանոններ»[17]։ Այստեղ, ի տարբերություն 1925 թ. կանոնների, պարզ-

12 Նույն տեղում, 1927, № 60, հոդված 609։

13 «ԱՍՖԽՀ... օրենքների և որոշումների հավաքածու», 1928, № 9, հոդված 101։

14 «ՀՍԽՀ... օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1929, № 1, հոդված 4։

15 «ԽՍՀՄ... օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1929, № 14, հոդված 117։

16 Նույն տեղում, № 34, հոդված 301։

17 Նույն տեղում, № 46, հոդվածներ 401 և 402։

որոշ նշվում էր, որ աշխատավորական են համարվում չքավոր և միջակ տնտեսությունները։

Նույն թվականի հոկտեմբերի 17-ին ԱՍՖԽՀ ժողկոմխորհը հաստատեց նոր «ժամանակավոր կանոնների» գործադրության վերաբերյալ հրահանգը[18], որով սահմանվում էր աշխատավորական տնտեսություններում վարձու աշխատանքի պայմանները, ինչպես նաև կուլակային տնտեսությունների հատկանիշները։

ՀՍԽՀ ժողկոմխորհը կուլակային տնտեսությունների բնորոշման վերաբերյալ համապատասխան որոշում ընդունեց մի քանի ամիս անց, 1930 թ. հունիսի 13-ին, երբ ծավալվել էր մասսայական կոլտնտեսային շարժումը և կուլակության, որպես շահագործող դասակարգի, վերացումը[19]։ Այս դեպքում ևս վարձակալությունը, դրա հետ միաժամանակ նաև եկամտի չափը, կուլակային տնտեսության ճանաչման բնորոշ կողմն էր։ Սկզբունքային փոփոխություն չմտցնելով նախկին որոշումների մեջ, այժմ ավելի էին ճշտվում և կոնկրետացվում կուլակային տնտեսությունը բնորոշող հատկանիշները։

Չնայած այդ բոլոր որոշումներին և պարզաբանումներին, գյուղի սոցիալ-տնտեսական երևույթների հետազոտումը դեռևս բարդ ու դժվարին գործ էր։ Այդ բնագավառում կատարվող աշխատանքները հանդիպում էին հիմնականում երկու կարգի դժվարությունների՝ չէին սահմանված ընդհանուր և կատարյալ մեթոդոլոգիական սկզբունքներ, անբավարար էր վիճակագրական նյութը։ Գյուղում տեղի ունեցող երևույթների ուսումնասիրման դժվարությունները մասամբ պայմանավորված էին սոցիալ-տնտեսական երևույթների բարդությամբ։

Հայտնի են գյուղը ճանաչելու դժվարությունների և դրանք հաղթահարելու ուղիների մասին Վ. Ի. Լենինի մի շարք դիտողությունները։ Չքավորներին հարկից ազատելու և հարուստների ու միջակների վրա հարկը ճիշտ բաշխելու կապակցությամբ Վ. Ի. Լենինը նշել է, որ «իհարկե, չի կարելի ճիշտ որոշել, թե ով է հարուստ, ով՝ աղքատ, սխալներ լինում են»[20]։ ՌԿ(բ)Կ VIII համագումարին արված զեկուցման մեջ միջակ գյուղացուն ճիշտ ճանաչելու համար Վ. Ի. Լենինը հարկավոր էր համարում «իմանալ այդ գյուղացու տնտեսության ամբողջ պատմությունը, նրա վերաբերմունքը դեպի ստորին ու բարձր խմբերը,—իսկ ամբողջապես իմանալ այդ մենք չենք կարող։ Այստեղ շատ գործնական հմտություն, տեղական պայմանների ճանաչողություն է հարկավոր»[21]։

Գյուղի դասակարգային խմբերի ճիշտ ճանաչումը, դրանց տնտեսական-քաղաքական դերի ճիշտ գնահատումը 20-ական թվականների կեսերին քաղաքական կարևոր նշանակություն ուներ։ Հարցը վերաբերում էր սովետական երկրի զարգացման հեռանկարներին, սոցիալիզմի կառուցման գործում բանվոր դասակարգի դաշնակցին՝ միջակ գյուղացիությանը տրվող նշանակությանը, կուլակության և գյուղում զարգացող կապիտալիզմի վտանգի դեմ պայքարին։ Տրոցկիզմը կեղծում էր իրականությունը, նսեմացնում միջակի դերը, գերագնահատում կուլակի վտանգը, վերջին հաշվով ժխտում սոցիա-

---

18 «ԱՍՖԽՀ... օրենքների և որոշումների հավաքածու», 1929, № 20, հոդված 186։

19 «ՀՍԽՀ... օրենքների և կարգադրությունների ժողովածու», 1930, № 8, հոդված 145։

20 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 29, էջ 21։

21 Նույն տեղում, էջ 246։

ցիոմի կառուցման հնարավորությունը Սովետական Միությունում։ Կուսակցությունը հակահարված տվեց այդ տեսակետների հեղինակներին ու պաշտպաններին, նշեց պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում սովետական գյուղում տեղի ունեցող սոցիալական շերտավորման առանձնահատկությունը, նրա արմատական տարբերությունը կապիտալիզմի պայմաններում տեղի ունեցող շերտավորումից։

Գյուղի սոցիալ-տնտեսական տեղաշարժերի ուսումնասիրության գործում մասնավորապես զգալի աշխատանք կատարեցին մարքսիստ ագրարագետ-տնտեսագետները և մյուս մասնագետները, հատկապես Կոմունիստական ակադեմիայի գիտնականները։ Սովետական գյուղի սոցիալ-տնտեսական երևույթների ուսումնասիրության մեջ մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայի հաստատման գործում մեծ է Յա. Յակովլևի, Լ. Կրիցմանի, Ա. Գայստերի և ուրիշների ծառայությունը։

Միութենական կենտրոնական վիճակագրական վարչության (ԿՎՎ) կառավարական մարմիններին ներկայացրած՝ 1925/26 թ. նախնական հաշվարկումներով, որ կատարվել էր ցանքատարածությունների հիման վրա, ստացվում էր, որ Սովետական Միությունում գյուղի ունևոր և հարուստ տնտեսությունները իրենց ձեռքում կենտրոնացրել էին ավելցուկ հացի 54, միջակները՝ 46 տոկոսը, իսկ սակավազոր տնտեսությունները հացի ավելցուկ չէին տալիս։ Միութենական ԺԿԽ-ն բանգյուղտեսչության ժողկոմատին հանձնարարեց ստուգել, թե որքանով են այդ տվյալները համապատասխանում իրականությանը։ Ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որը բավական աշխատելուց հետո կազմեց համապատասխան զեկուցում, որի լրացված տարբերակը հրատարակվեց 1926 թ.[22]։ Հանձնաժողովը մերժեց գյուղացիությանը ըստ ցանքատարածության խմբավորելու սկզբունքը, որը «սքողում և մթագնում է միջակ գյուղացիության ժողովրդա-տնտեսական նշանակությունը»։ Նա գտավ, որ սոցիալ-տնտեսական խմբավորման հիմքում պետք է դնել հետևյալ տարրերը՝ ցանքը, արտադրության միջոցները և սոցիալական հարաբերությունները (վարձակալություն), հաշվի առնելով դրանց դասակարգային բնույթը։ Դասակարգային բաժանման այդ սկզբունքով գյուղի հիմնական սոցիալ-տնտեսական տիպեր համարվեցին չքավորը (շահագործվող), հարուստը (շահագործող) և նրանց միջև գտնվող միջակը։

Բանգյուղտեսչության ժողկոմատի ուսումնասիրությունները հետագա տարիներին շարունակվեցին ավելի լայն ծրագրով։ Մարքսիստ հետազոտողները տվյալների անբավարարության պատճառով, դեռևս չհրաժարվելով սոցիալական տիպերի բնորոշման անուղղակի տվյալներից (գյուղացիության խմբավորումը ըստ ցանքատարածության և բանող ուժի), այնուամենայնիվ, շեշտ դնում էին այդ տիպերը ուղղակիորեն բնորոշող հատկանիշների վրա։

Հաշվի առնելով դասակարգային խմբավորումը բնորոշող ուղղակի տվյալների անբավարարությունը և այն հանգամանքը, որ դասակարգային խմբավորումը դեռևս չէր ստացել իր վերջնական մեթոդոլոգիական լուծումը, ինչպես նաև ելնելով հարցի կարևորությունից ու անհրաժեշտությունից, միութենական ԲԳՏ ժողկոմատը Կոմակադեմիային հանձնարարեց համատեղ

---

22 Я. А. Яковлев, Об ошибках хлебофуражного баланса ЦСУ и его истолкователи. М., 1926.

մշակված ծրագրով փորձել որոշելու սովետական հասարակության դասակարգային խմբերի տեսակարար կշիռը։ Հետազոտողների ուշադրության կենտրոնում դրվեց գյուղի շերտավորման, հողի վարձակալության, աշխատուժի վարձման, գյուղացիական տնտեսության կազմակերպման ու տեխնիկայի, շուկայական հարաբերությունների, կոոպերացման և այլ հարցերի պարզաբանումը։ Դրխավոր նպատակն էր՝ հետազոտել գյուղատնտեսության մեջ սոցիալիստական և կապիտալիստական տարրերի հարաբերությունները, ժամանակել գյուղի սոցիալիստական վերակառուցման նախապատրաստմանը։

Ուսումնասիրության արդյունքների համառոտ շարադրանքը տպագրվեց առանձին գրքով[23], որտեղ գյուղի շերտավորման հարցերին հատկացված է առանձին բաժին[24]։ Սովետական Միության տարբեր շրջանների տվյալներով վերլուծվեցին տարբեր խմբերի սոցիալական կապերի ու հարաբերությունների պարզացման տարրերը՝ հողի կապալառությունը, գյուղատնտեսական կենդանի ու մեռյալ գույքի և աշխատուժի վարձակալությունը և այլն։

Համանման ուսումնասիրություն կատարեց նաև ԽՍՀՄ ԺԿԽ-ի որոշումով ստեղծված Հատուկ հանձնաժողովը, որի վերջնական նպատակն էր պարզել հարկային ծանրաբեռնվածությունը։ Այդ նպատակով հանձնաժողովը, որի կազմում կային հեղինակավոր գիտնականներ, կարևոր հետազոտություն կատարեց բազարի և գյուղի բնակչության դասակարգային կառուցվածքի, գյուղի սոցիալական շերտերի հատկանիշների ընտրության, տնտեսությունների մեջ դրանց տեսակարար կշռի պարզաբանման և այլ հարցերի ուղղությամբ։ Գյուղատնտեսությամբ զբաղվող բնակչությունը բաժանվեց չորս սոցիալական խմբի՝ գյուղատնտեսական պրոլետարիատ, չքավորներ, միջակներ և ձեռնարկատիրական տիպի տնտեսություններ։ Եկամտի և հարկային գումարի կազմում գյուղի սոցիալական շերտերի դերը որոշելիս հանձնաժողովը հաստատեց միջակի՝ գյուղի կենտրոնական դեմքի վերաբերյալ կոմունիստական կուսակցության դնահատականը։ 1924/25—1926/27 թթ. համար մշակված վիճակագրական տվյալները վկայում էին սովետական իշխանության պայմաններում գյուղի սոցիալական շերտավորման առանձնահատուկ բնույթի մասին[25]։

Հանձնաժողովը իր մշակած մեթոդոլոգիական սկզբունքները և ստացված տվյալները կատարյալ ու վերջնական չէր համարում, ուստի առաջարկում էր բարելավել և ճշտել դրանք։ Պայմանական էին դիտվում գյուղատնտեսական բնակչության շերտավորման վերաբերյալ հաշվարկները՝ միասնական մեթոդի և կայուն սահմանված հատկանիշների բացակայության պատճառով, հատկանիշներ, որոնք պետք է հնարավորություն տային ավելի ճշտորեն պարզելու գյուղացիական տնտեսության պատկանելությունը գյուղի այս կամ այն սոցիալական խմբին։

---

23 «К вопросу о социалистическом переустройстве сельского хозяйства». Материалы исследования НК РКИ СССР, Л.—М., 1928.

24 Նույն տեղում, էջ 3—78։

25 Տե՛ս «Тяжесть обложения в СССР (социальный состав, доходы и налоговые платежи населения Союза ССР в 1924/25, 1925/1926 и 1926/27 годах». Доклад комиссии Совета Народных Комиссаров Союза ССР по изучению тяжести обложения населения Союза, М., 1929.

Գյուղի դասակարգային խմբերի սոցիալական բնութագրման մեթոդոլոգիական հարցերին էր նվիրված 1927 թ. հունվարին Կոմունիստական ակադեմիայում կազմակերպված բանավեճը, որտեղ զեկուցումով հանդես եկավ Լ. Կրիցմանը[26]։ Նա նշեց, որ գյուղացիությանը ըստ անուղղակի հատկանիշների (ցանքատարածություն, բանվորական և այլ անասուններ, մեռյալ գույք, արտադրամիջոցների արժեք) խմբավորելն անընդունելի է, որ դրանց մասին վիճակագրական նյութերը «մեր պայմաններում հնարավորություն չեն տալիս իրականությանը շատ թե քիչ համապատասխանող պատկերացում ստանալու գյուղացիության դասակարգային կազմի մասին»։ Այդպիսի պատկերացում կարող էին տալ միայն ուղղակի դասակարգային հատկանիշների վրա կառուցված խմբավորումները։ Լ. Կրիցմանը, որը տվյալ հարցի հեղինակավոր մասնագետներից էր[27], առաջարկեց գյուղացիությանը խմբավորել ըստ բանուժի և արտադրամիջոցների վարձակալության հատկանիշների՝ հաշվի առնելով, թե ինչ չափով է տնտեսությունը վարվում ինքնուրույն, որքանով է գյուղացու տնտեսության բանուժը միանում նրա արտադրամիջոցներին։

Լ. Կրիցմանի ղեկավարությամբ 1926 թ. Կոմունիստական ակադեմիայում սովետական գյուղի շերտավորումն ուսումնասիրող մի խումբ հեղինակներ նույնպես հանդես եկան ուշագրավ գործերով։ Բանուժը վարձակալելու և վաճառելու, բանվորական անասունն ու գործիքները վարձակալելու և հանձնելու, վարելահողը (երկու դեսյատինից ավել) վարձակալելու ուղղակի դասակարգային հատկանիշների կոմբինացման միջոցով Ա. Գայստերը գյուղացիությանը բաժանեց երեք խմբավորումների, հինգ խմբերով[28].

Ա-Պրոլետարական և կիսապրոլետարական տնտեսություններ.

1-Պրոլետարներ

2-Կիսապրոլետարներ (չքավորներ)

Բ-Ինքնուրույն արտադրողներ (միջակներ)·

3-Միջակներ

4-Ձեռնարկատիրության տարրերով տնտեսություններ

Գ-Մանրկապիտալիստական տնտեսություններ.

5-Մանր կապիտալիստներ և կիսակապիտալիստներ (կուլակներ)։

Ա. Գայստերի խմբավորումն ուներ ինչպես դրական կողմեր, այնպես էլ թերություններ։ Այնուամենայնիվ, ինչպես նշել է Լ. Կրիցմանը, Ա. Գայստերի աշխատությունը առաջադիմական քայլ էր սոցիալական հարաբերությունների վերլուծության գործում և հեշտացնում էր այդ բնագավառում տարվող աշխատանքները[29]։

---

26 «На аграрном фронте», 1928, № 4, стр. 114—144, № 5, стр. 123—146.

27 Տե՛ս Л. Крицман, Классовое расслоение в советской деревне. М., 1926. Նույնի հոդվածները. «К вопросу о классовом расслоении современной деревни («На аграрном фронте», 1925, №№ 2, 7—8, 9, 10). «О статистическом изучении классовой структуры советской деревни» (там же, 1926, № 9, 1927, №№ 7, 8—9, 10). «Десять лет на аграрном фронте пролетарской революции» (там же, 1927, № 11—12).

28 Տե՛ս А. Гайстер, Расслоение советской деревни. Вступительная статья Л. Крицмана, М., 1928. Տե՛ս նաև նույնի՝ «Соотношение классов и групп в деревне» («На аграрном фронте», 1927, № 10). «Расслоение деревни и оппозиция» (там же, 1927, № 11—12).

29 Տե՛ս А. Гайстер, Расслоение советской деревни, стр. XXXI.

ԽՍՀՄ ԺԿԽ-ի վերոհիշյալ հանձնաժողովում աշխատելու ժամանակ Ա. Դայստերը հանդես եկավ սովետական գյուղը սոցիալապես խմբավորելու նոր փորձով, որի արդյունքները տպագրվեցին հանձնաժողովի զեկուցման հետ միասին[30]։ Նորությունն այն էր, որ առանձնացվել էին կոլեկտիվ տնտեսություններ և սոցիալիստական սեկտորի պրոլետարիատը, իսկ մասնավոր սեկտորը բաժանվել էր պրոլետարիատի, կիսապրոլետարիատի, պարզ ապրանքարտադրողների և մասնավոր կապիտալիստական ապրանքարտադրողների։

Գյուղի սոցիալական շերտավորումն ուսումնասիրելու փորձեր կատարեցին նաև մի շարք այլ հեղինակներ[31]։

***

20-ական թվականներին սովետական վիճակագրության վրա մեծ ազդեցություն ուներ նախասովետական զեմստվային վիճակագրության մեթոդոլոգիան, որը հանգում էր գյուղացիության ուսումնասիրությանն ըստ ունեցվածքային աստիճանի՝ հիմնականում ըստ ցանքատարածության։ Սովետական մարքսիստ հետազոտողները, պայքարելով այդ մեթոդոլոգիայի կողմնակիցների (Ա. Ի. Խրյաշչևա և ուրիշներ) դեմ, ցույց տվեցին, որ ըստ ցանքատարածության կամ ըստ ունեցած անասունների, նույնիսկ ըստ արտադրամիջոցների արժեքի, իմաստավորումը չի կարող ճիշտ պատկերացում տալ սոցիալական խմբերի ու դրանց հարաբերությունների մասին։ Դրանք գնահատվեցին որպես սոցիալական ուժերի ճանաչման անուղղակի հատկանիշներ։ Մերժվեցին ըստ ցանքատարածության խմբավորման մեթոդի գերագնահատման Ա. Խրյաշչևայի և մյուսների փորձերը՝ պաշտպանելու Վ. Ի. Լենինի հեղինակությամբ։ Սովետական մարքսիստ հետազոտողները նշեցին, որ Վ. Ի. Լենինը այդ կարգի տվյալներից օգտվել է, նախ, պատմական բոլորովին այլ պայմաններում, երբ հողը և նրա կենտրոնացումը շահագործման միջոց էին, իսկ սովետական իշխանության պայմաններում, հողի աղգայնացման և հավասարաբաշխության շնորհիվ, ըստ ցանքատարածության խմբավորումը կորցրել է ուսումնասիրության իր նախկին նշանակությունը։ Բացի այդ, Վ. Ի. Լենինը այդ տվյալներին դիմել է միայն մասամբ։ Նա գյուղի սոցիալական հարաբերությունները պարզելու համար օգտվել է նաև բազմաթիվ այլ կարգի նյութերից ու տվյալներից։ Սովետական պայմաններում ևս ըստ ցանքատարածության խմբավորման տվյալները և մյուս անուղղակի հատկանիշները միայն օժանդակ մեթոդ էին սոցիալական երևույթներն ուսումնասիրելու համար։

Գյուղի սոցիալական երևույթների հետազոտության մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայի հաստատումն օգնում էր կատարելագործելու սովե-

---

30 Տե՛ս «Тяжесть обложения в СССР...», стр. 124.

31 Տե՛ս Я. Анисимов, И. Верменичев, К. Наумов, Производственная характеристика крестьянских хозяйств различных социальных групп, М.—Л., 1927. С. Дубровский, Расслоение крестьянства и задачи партии в деревне («На аграрном фронте», 1927, № 11—12). К. Наумов, Д. Шардин, Опыт построения классовой группировки крестьянских хозяйств (там же, 1928, № 4). И. Дубинский, Социально-экономические отношения крестьянских хозяйств подмосковной деревни (там же, 1928, № 12). А. Азизян, Характеристика сдающих и арендующих землю хозяйств (там же, 1927, № 10).

տակսն գյուղի վիճակագրությունը. այն գնելու գիտական, մարքսիստական հիմքի վրա։ 20-ական թվականների երկրորդ կեսին գյուղացու բյուջեի և մյուս վիճակագրությունները աստիճանաբար դարձան ավելի խորը և բազմակողմանի։ Վիճակագրության կստարելագործումն իր հերթին նպաստեց գյուղի ուսումնասիրության մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայի ամրապնդմանը։

1926 թ. սկսվեց վիճակագրական գործի վերակառուցումը։ Վիճակագրական մարմինները համալրվեցին մարքսիստ մասնագետներով։ Բեկում կատարվեց սովետական վիճակագրության զարգացման մեջ։

Աշխատանքների վերակառուցումից և կադրերի համալրումից հետո, կոմունիստական կուսակցության պահանջով, սովետական վիճակագրական մարմինները մեծ ուշադրություն նվիրեցին գյուղի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրմանը։ Այդ ժամանակ, ինչպես նշել է ՀՍԽՀ կենտվիճվարչությունը, «սուր կերպով դրվեց նոր պայմաններին համապատասխան այն նոր եղանակների որոնման հարցը, որոնք թույլ տային բացահայտելու գյուղացիության մեջ խմբերի և դասակարգերի հարաբերությունները»[32]։

Աշխատանքների վերակառուցման այդ բեկումնային շրջանը համընկավ բնային-դինամիկ վիճակագրական մեթոդով Անդրկովկասի գյուղի ուսումնասիրության կազմակերպմանը, որի նպատակն էր ուսումնասիրել գյուղի սոցիալական կառուցվածքը և շարժումը (դինամիկան)։ Այդ մեթոդով հետազոտությունը կատարվում էր որոշակի թվով տնտեսությունների բյուջեների ուսումնասիրության միջոցով՝ միութենական ԿՎՎ-ի մշակած ծրագրով։

1927 թ. բնային-դինամիկ հետազոտությունը, ի տարբերություն նախորդ տարվա, ընդգրկեց ավելի մեծ թվով տնտեսություններ և անցկացվեց ավելի լայն ծրագրով։ Ստացված վիճակագրական տվյալները նախատեսվում էր մշակել Կոմունիստական ակադեմիայում Լ. Կրիցմանի գլխավորությամբ կիրառվող մեթոդոլոգիական սկզբունքով[33]։ Ինչպես նշված է ԱՍՖԽՀ ԿՎՎ-ի՝ «Անդրկովկասի գյուղի շերտավորման նյութերի մեկնաբանությունները» վերնագրում[34], մինչև 1928 թ. հոկտեմբերը թե՛ միութենական, թե՛ առանձին հանրապետությունների և թե՛ առանձին մարզերի մասշտաբով գյուղի շերտավորման ուսումնասիրությունը դեռևս չէր ավարտվել։ Դա պատճառաբանվում էր նրանով, որ հարցի մեթոդոլոգիան դեռևս բավականաչափ չէր մշակված։

Ամբողջ Սովետական Միությունում 1927-ի բնային-դինամիկ վիճակագրության տվյալները ենթադրվում էր մշակել մեկ միասնական սիստեմով։ Քանակական (տնտեսական) և որակական (սոցիալական) հատկանիշներով գյուղացիությունը բաժանվում էր չորս դասակարգերի՝ պրոլետարիատ, կիսապրոլետարիատ, ապրանքարտադրողներ և մանրկապիտալիստական տնտեսություններ (նախնական սխեմայով գյուղացիությունը բաժանվել էր հինգ դասակարգային խմբերի՝ կախյալ տնտեսություններ, կիսակախյալ տնտեսություններ, պարզ ապրանքարտադրողներ, կիսաձեռնարկատերեր և ձեռնար-

32 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, ա. 601, թ. 217—226։
33 Նույն տեղում, ֆ. 163, ց. 3, գ. 166, թ. 1—3։
34 ՄԼԻ ՎՖԱ, ֆ. 13, ց. 1, գ. 2697, թ. 3—30։

կատերը։ Անդրկենտվիճվարչությունը ծանուցում էր, որ այդ բաժանումը ևս, հավանորեն, վերջնական չէ։

Բնային-դինամիկ վիճակագրության նյութերի մշակման եզրափակիչ փուլում, խորացված ծրագրով, նախատեսվում էր բնութագրել գյուղի դասակարգերը, փորձ էր արվելու ստացած եզրակացությունները կիրառել տվյալ ամբողջ հանրապետության նկատմամբ։ Նյութերը ենթարկվելու էին վերջնական գիտական մշակման։ Սակայն բնային-դինամիկ վիճակագրության տվյալների մշակումը, որի վերջնական նպատակն էր պարզաբանել գյուղի սոցիալական հարաբերությունները և դասակարգային կազմը, Անդրկովկասում ավարտի չհասցվեց։

Այսպիսով, 1. Սովետական գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գիտական ուսումնասիրությունը հնարավոր դարձավ միայն մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա։

2. Գյուղը, նրա դասակարգային ուժերը ճանաչելու և հետազոտելու առաջնությունը պատկանում է Վ. Ի. Լենինին։ 20-ական թվականներին սովետական մարքսիստ մասնագետները մեծ աշխատանք կատարեցին մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հիման վրա գյուղի սոցիալ-տնտեսական երևույթների հետազոտության ընդհանուր մեթոդոլոգիական սկզբունքները մշակելու բնագավառում։ Այդ մեթոդոլոգիայի բնորոշ կողմը հասարակական արտադրության մեջ գյուղի տարբեր դասակարգերի տեղի և դերի, դասակարգային խմբերի սոցիալական հարաբերությունների պարզաբանումն էր։

3. Սովետական գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ուսումնասիրման աշխատանքները ծավալելու գործում կարևոր նշանակություն ունեցան կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության որոշումները, գնահատականներն ու եզրակացությունները։ Այդ գործում մասնավորապես մեծ վաստակ ունեն մարքսիստ ագրարագետ-տնտեսագետները։

4. Գյուղի գիտական հետազոտության մեջ մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հաստատումը նպաստեց վերակառուցելու սովետական վիճակագրության սկզբունքները, որոնց հիմքում դրվեցին գյուղի սոցիալական դեմքը բնորոշող ուղղակի դասակարգային հատկանիշների բացահայտումը և ուսումնասիրությունը։

5. Գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման հետազոտության մեջ մարքս-լենինյան մեթոդոլոգիայի հաստատումը տեղի էր ունենում բուրժուական և մանրբուրժուական մեթոդոլոգիաների դեմ պայքարի պայմաններում։ Սովետական մարքսիստական վիճակագրությունը 20-ական թվականների կեսերին մերժեց հին, զեմստվային վիճակագրությունը և նրա մեթոդոլոգիական սկզբունքները։

6. Սովետական գյուղի ուսումնասիրությունը, ինչպես նաև համապատասխան վիճակագրությունը շարունակվեցին ամբողջ 20-ական թվականներին։

7. 20-ական թվականների գիտահետազոտական ժառանգությունը և վիճակագրությունը հարուստ նյութ են տալիս սովետական նախակոլտնտեսային գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման, գյուղացիության դասակարգային կառուցվածքի ուսումնասիրության համար։

МЕТОДОЛОГИЯ ИЗУЧЕНИЯ ДОКОЛХОЗНОЙ ДЕРЕВНИ

В. Н. КАЗАХЕЦЯН

Резюме

Научное исследование социально-экономического развития советской доколхозной деревни стало возможным только благодаря применению марксистско-ленинской методологии. Выводы и замечания относительно развития деревни в условиях нэпа содержатся в решениях и резолюциях КПСС и советского правительства. Большой вклад в развитие этой области науки внесли также марксистские экономисты-аграрники 20-х годов.

В противоположность буржуазным и мелкобуржуазным течениям, марксизм-ленинизм рассматривает вопросы крестьянского хозяйства в их социально-экономической взаимосвязи. К исследованию советской деревни В. И. Ленин применял методологический принцип качественного разграничения различных классовых групп крестьянства. Советские авторы провели большую работу в области изучения социально-экономических отношений и социально-классового состава деревни на основе раскрытия прямых классовых признаков (арендные отношения земли, рабочей силы, инвентаря и т. д.).